



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2011 թ.

<Խտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ
փոխտնօրեն պարոն Ա.Ավետիսյանին
հասցե՝ ք.Երևան, Ագաթանգեղոսի 2

Կից ուղարկվում է Ձեր 12.12.2011թ. գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 10.01.2012թ. թիվ 1/3 որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/3

10 հունվարի 2012թ.

Քննարկվեց <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ 12.12.2011թ-ի գանգատը « ԿԱ ՊԵԿ ՕՎՎ 24.11.2011թ. թիվ 1012521/1 ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 30.09.2011թ. թիվ 1012521/1 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում 24.11.2011թ-ին կազմվել է թիվ 1012521/1 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 67.847.083 դրամ:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> « օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի համաձայն վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե. <ա> անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը>:

Հաշվի առնելով, որ <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ գործով « ԿԱ ՊԵԿ Հետաքննության վարչությունում նյութեր են նախապատրաստվում քրեական գործի հարուցման անհրաժեշտությունը պարզելու նպատակով, Հանձնաժողովը գտնում է, որ անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> « օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ 12.12.2011թ-ի գանգատի հիման վրա « ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» « օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> « օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի դրույթներով՝ <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ 12.12.2011թ-ի գանգատի հիման վրա « ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:



Հանձնաժողովի նախագահ

S.ԲԱՐՍԵՂՅԱՆ